

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՏՄ ղեկավարի մոտ 2019 թվականի հուլիսի 9-ին կայացած  
քաղաքացիների ընդունելության արդյունքների վերաբերյալ

ՀՀ	Հաշվառման օրը	Անուն, ազգանուն	Հարցի համառոտ բովանդակությունը	Տրված հանձնարարականը	Արդյունքը
1.	27.06.2019թ.	Մարինա Չիչակյան	Աշխատանքի ընդունման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	Հանձնարարվել է ՍԱՏՄ կադրերի բաժնի պետ Ա. Վարդանյանին քաղաքացուն տրամադրել քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքի հասցեն և տեղեկատվություն քաղաքացիական ծառայության պաշտոններ գբաղեցնելու կարգի վերաբերյալ	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՍԱՏՄ-ում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի մասնագիտական աշխատանքային փորձի բացակայությամբ կարելի է հավակնել միայն քաղաքացիական ծառայության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի: Քաղաքացուն առաջարկվել է գրանցվել վարկանիշային ցուցակում և պարբերաբար հետևել ՍԱՏՄ պաշտոնական կայքում տեղադրված քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների առկայության մասին հայտարարություններին